

ՊԵՂԱՏՆՈՐԻ ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՒ

ՀԱՅԵՐԸ

(Շար. բազմ. 1953, թ. 8-10, էջ 193)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ

ԺԲ. — Հայաստան արարական գրա-
ւումեն առաջ.

Ինձի պատմեց Մոհամմէտ իսկ իսմա-
յիլ Պարտաւորին եւ ուրիշներ՝ լսելով Ապու
Պարայ Անպատա իսկ Պահր ալ-Արմանին
(Հայէն). ու պատմեց ինձի Մոհամմէտ
իսկ Պիշր Կարնեցին՝ լսելով ծերերէն, ու
պատմեց Պարմաք իսկ ալ-Մուխայրս Խը-
լաթցին եւ ուրիշներ որ լսած են այնպիսի-
ներէն որ ծանօթ են Հայաստանի պատմու-
թեան: Անոնց պատմածները հաւաքեցի եւ
իրարու կցեցի: Անոնք կը պատմեն թէ
Շիմշաթ, Բալիքալա (Կարին), Խաթ, Արճէշ
եւ Պաճուռայք՝ կը կոչուէին Չոր-
րորդ Հայք: Վասպուրական դաւաճը,
Դուին, Սիրած Թայր (Շիրակ Տայոց), ու
Բազրեանդ՝ կը կոչուէին Երրորդ Հայք.
Ճըրդան (Վրկանք, Վիրք) կը կոչուէր Եր-
կրորդ Հայք, իսկ Սիսական ու Առան՝ կը
կոչուէին Առաջին Հայք:

Կ'ըսուի նաեւ թէ միայն Շիմշաթ կը
կոչուէր Չորրորդ Հայք, իսկ Խաթ, Ար-
ճէշ ու Պաճուռայք կը կոչուէին Երրորդ
Հայք. Սըրած Թայր, Բազրեանդ, Դուին
եւ Վասպուրական՝ կը կոչուէին Երկրորդ
Հայք. իսկ Սիսական, Առան, եւ Թիֆլիս՝
կը կոչուէին Առաջին Հայք:

Ճըրդան (Վիրք, Վրկանք, Վրաստան)
եւ Առան (Աղուանք), Խաղարներու ձեռքն
էին. իսկ Հայաստանի մնացած մասը Յոյ-
ներու ձեռքն էր ու զայն կը կառավարէր
Արմենիակոս կոչուած Յոյն իշխանը:

Խաղարները սովորաբար կ'ելլէին կը
յարձակէին. դուցէ ալ հասնէին մինչեւ
Տայնաուար (Ատրպատականի մէջ): Կա-
ւատ Ֆէրուզ Թաղաւորին որդին Ղրկեց իր
նշանաւոր զօրավարներէն մէկը տասներ-
կու հազարով ու ասպատակեց Առան եւ-
կիրը՝ Արաքս գետէն մինչեւ Շարուան:
Յետոյ Կաւատ անոր հետ միանալով շինեց
Առանի մէջ Պայլազան (Փայտակարան)
քաղաքը, Պարտաւ՝ սահմանադրութի քա-
ղաքը ու Քապալայ քաղաքը՝ Խաղարնե-
րուն դէմ: Յետոյ շինեց արեւու տակ թըր-
ծուած աղիւտի պատնէշը Շարուան երկրին
ու Ալաններու դրան մէջտեղ: Շինեց այս
պատնէշին վրայ 360 քաղաք որ աւերուե-
ցան Պապ էլ-Ապուլապի (Դուռներու Դուռ,
Ճորայ Պահակ, Դարբանդ, Պահակ Հո-
նաց, Դուռն Խաղարաց) շինութենէն վերջ:

Կաւատի յաջորդեց անոր որդին Խոսրով
Անուշիրուան որ շինեց Շապիրան, Մաս-
քաթ ու Պապ էլ-Ապուլապ քաղաքները: Ա-
պուլապ (դռներ) կոչուեցաւ որովհետեւ լե-
րան մէջ ճամբու մը վրայ շինուեցաւ: Այս
քաղաքներուն մէջ բնակեցուց ժողովուրդ
մը զոր կոչեց Սիսական:

Առանի մէջ ալ շինեց Շաքէի դռները,
Քամիբերան եւ Տաուտացիներուն (Ծոզա-
ցոց) դռները: Այստեղի բնակիչները կը
պնդէին թէ իրենք առաջ կու գան Տաուտան
իսկ Ասատ իսկ Խուզաթայի ցեղէն: Շի-
նեց նաեւ Տարգուքիա (Դարձոնկ) որ է
տասներկու դուռ, եւ իւրաքանչիւր դուռ
քաղէ ամբողջ մըն էր: Ճուրդան (Վրաս-
տան) երկրին մէջ շինեց Սուղտապի կոչ-

ուած քաղաք մը, ուր բերաւ Սուղտ ու
Պարսիկ ժողովուրդներ, եւ քաղաքը թը-
նամիներուն դէմ սահմանապահ: Ճուրդան
երկրին մէջ Յոյներուն երկրին կից շինեց
ամբողջ մը որ կոչեց Ֆիրուզ Կաւատի
դուռ, եւ շինեց ուրիշ բերդ մ'ալ որ կո-
չեց Պարմաքի դուռ: Տրապիզոնի ծովուն
վրայ: Շինեց նաեւ Ալաններու դուռը,
Սամսիսի դուռը, Գարդման ու Սամշու-
տէ բերդերը:

Անուշիրուան Յոյներու ձեռքէն դրաւեց
ինչ որ Հայաստանի մէջ ունէին ու շինեց
Դուին քաղաքը եւ զայն ամրացուց: Շինեց
նաեւ Նախիջեւան քաղաքը որ Վասպուրա-
կան սահմաններին կը պատկանէ: Շինեց Վա-
յոց Ամրոցը (Վայոց Ձոր) ու բերդեր Սի-
սական երկրին մէջ, որոնցմէ են Քիլապ
ու Սահիունի բերդերը ու այս բերդերուն
ու ամրոցներուն մէջ բնակեցուց սիսական
քաջ մարդիկ:

Յետոյ Անուշիրուան գրեց Թուրքերուն
Թաղաւորին ու անկէ խնդրեց բարեկամու-
թիւն ու հաշտութիւն որպէսզի անոնց եր-
կուքին շահերը նոյն ըլլան: Նշանուեցաւ
անոր աղջկան հետ որպէսզի մտերմանան,
ու փափաք յայտնեց անոր հետ աղբակա-
նանալու: Անոր զրկեց իր աղախիններէն
մէկը զոր որդեգրած էր իր կիներէն
եւ ըսաւ թէ իր աղջիկն է: Թուրքն ալ ա-
նոր նուիրեց իր աղջիկը. իրարու եկան ու
հանդիպեցան Պարչալիայի մէջ: Քանի մը
որ խնձոյք ըրին ու զիրար զուարճացուցին
ու ցոյց տուին իրենց բարեկամութիւնը:
Յետոյ Անուշիրուան հրամայեց խումբի
մը իր մեծամեծներէն ու մտերմներէն որ
գիշեր ատեն յարձակին Թուրք բանակին
մէջ կողմին վրայ ու զայն այրեն: Հրա-
մանը կատարեցին, եւ երբ առաւօտ եղաւ,
մանր կատարեցան Անուշիրուանի.
Թուրքերը գանգատեցան Անուշիրուանի.
թուրքացաւ թէ ինքը այդ բանը հրա-
մայած ըլլայ եւ ոչ ալ գիտէ թէ իր ըն-
կերներէն մին ըրած ըլլայ: Երբ քանի մը

գիշեր անցաւ, հրամայեց նոյն մարդերուն
որ նոյն բանն ընեն եւ նոյն բանն ըրին:
Թուրքը շատ բարկացաւ, այնպէս որ Ա-
նուշիրուան ներողութիւն խնդրեց անկէ.
այն ատեն հանդարտեցաւ:

Յետոյ Անուշիրուան հրամայեց ու կը-
րակ նետել տուաւ իր բանակին մէջ մա-
սին մէջ ուր խոտէ ու գաւազաններէ շին-
ուած խրճիթներ միայն կային: Երբ առա-
ւօտ եղաւ, Անուշիրուան բարկացաւ Թուր-
քին եւ ըսաւ. քիչ մնաց մարդիկդ կը փը-
նացնէին իմ բանակս, դուռն կասկածովդ
ինձմէ վրէժ լուծեցիր: Այն ատեն Անու-
շիրուան ըսաւ. Եղբայր, մեր ու ձեր գիւ-
նուորները ճանճրացան մեր հաշտութենէն,
որովհետեւ ասպատակութիւններու ու
պատերազմներու ժամանակի իրենց բաժին
ինկած կողոպուտները ա'լ դադարեցան: Ես
ապահով չեմ, անոնք կրնան այնպիսի
դէպքեր պատահեցնել որ մեր սրտերը պա-
ղեցնեն մեր հաշտութենէն ու մտերմութե-
նէն վերջ: Այնպէս որ կրնանք դառնալ
դէպի թշնամութիւն յետ խնամութեան
եւ սիրոյն: Ես խորհուրդ կու տամ քեզի
որ ինձի թոյլ տաս որ շինեմ պատուար մը
մեր միջեւ եւ անոր վրայ շինեմ դուռ մը,
այնպէս որ մէկը քովդ չմտնէ մեզմէ, եւ
ոչ ալ մէկը քեզմէ, բացի մեր ուղածնե-
րէն: Թուրքը հաւանեցաւ խորհուրդին ու
գնաց իր երկիրը:

Անուշիրուան հսկեց պարսպին շինու-
թեան ու զայն շինեց ծովուն կողմէն ժայ-
ռով ու կապարով: Անոր լայնութիւնը շի-
նեց երեք հարիւր կանգուն ու զայն հաս-
ցուց լեռներուն կատարներուն: Հրամա-
յեց որ նաւերը կրեն քարերը ու ծովուն
մէջ նետեն, այնպէս որ քարերը ջուրին
երեսը երեւնային վերջ վրան շինէ: Պարսա-
պը ծովին երկայնութեամբ գնաց երեք
մղոն. եւ երբ լմնցուց շինութիւնը, մուտ-
քին դրաւ երկաթէ դռներ: Հարիւր ձիա-
ւորի յանձնեց անոր պահպանութիւնը,
մինչ առաջ այնտեղ կը կարօտէր յիսուն

հազար զինուորի: Անոր վրայ չենեց պատերազմական պաշարման աշտարակ մը և ըստեցաւ խաբանի թէ Անուշիրուան զքեզ խաբեց ու ամուսնացուց քեզի ոչ թէ իր աղջիկը, այլ ուրիշ մը, եւ ամուսնութիւն չենեց քու դէմ: Խաբան բան մը չկրցաւ ընել Անուշիրուանի դէմ:

Անուշիրուան նշանակեց արքայիկներ ու անոնցմէ իւրաքանչիւրին նշանակեց դաւառ մը իրենց տալով Շահ տիրութիւն: Անոնցմէ էր Լիրան (Ճապալի) Խաբանը, որ է Շարիրի իշխանը որ կը կոչուի Ուահարադան: Անոնցմէ են Ֆիլանի արքայիկը Ֆիլանշահ, Լաքի արքայիկը Ճըրշահ, ու Մասքաթի արքայիկը որուն իշխանութիւնը դադրած է: Լիրանի արքայիկը կը կոչուի Լիրանշահ, Շարուանի թագաւորը կը կոչուի Շարուանշահ, Պուխի արքայիկը եւ Ջիրիկիրանի իշխանը: Հաստատեց Կովկաս լեռան արքայիկները իրենց թագաւորութիւններուն մէջ. անոնց հետ դաշինքներ կնքեց պայմանով որ տուրք վճարեն:

Հայաստան շարունակեց մնալ Պարսիկներու ձեռքը մինչեւ Իսլամներու երեւումը: Սիսականցիներէն շատեր թողուցին իրենց բերդերն ու քաղաքները, այնպէս որ զօրացան եւ գրաւեցին զանոնք Խաղաքներն ու Յոյները:

Կը պատմուի թէ Յոյներուն վիճակը ինչ ինչ ժամանակներու մէջ շատ լաւ էր, եւ սատրապներու պէս կ'իշխէին Հայաստանի վրայ: Անոնցմէ մէկը՝ Արմինիակոս իշխեց Հայերուն վրայ. իր մահէն վերջ իր կինը որ կը կոչուէր Քալէ, չենեց Քալիքալա քաղաքը ու կոչեց Քալիքալա (Կարին), որ կը նշանակէ Քալէի բարի գործը: Անոր պատկերը քանդակուեցաւ քաղաքին դրան վրայ ու Արաբները զայն կոչեցին Քալէքալա (Կարին) (էջ 193-197):

ԺԹ. — Հայիկ իպն Մալամա կը գրաւէ Կարինը.

Պատմած են թէ երբ Օթման իպն Օֆֆան խալիֆայ եղաւ (644-656), գրեց Մուսուլիայի որ իր գործակալն էր Սիւրիոյ, Միջագետքի, ու անոնց սահմանագիծը քաղաքներուն վրայ՝ հրամայելով որ ուղարկէ Հայիկ իպն Մալամա ալ-Ֆիհրի, Հայաստանը գրաւելու: Հայիկ լաւ յիշատակ թողուցած էր Սիւրիոյ նուաճումին ու Յոյներուն դէմ արշաւանքին ժամանակ: Այս բանը լաւ դիտէր Օմար, ու յետոյ Օթման եւ անոնք որ անոր յաջորդեցին:

Ուրիշներու համեմատ հակառակը կը պատմուի թէ Օթման գրեց Հայիկի հրամայելով անոր որ արշաւէ Հայաստանի վրայ: Բայց առաջին պատմութեամբ աւելի ճիշտ կ'երեւի:

Հայիկ ճամբայ ելաւ վեց հազարով եւ ուրիշներուն համեմատ՝ ութ հազարով որ զինուորադրուած էին Սիւրիոյ ու Միջագետքի բնակիչներէն: Հայիկ եկաւ Կարին ու պաշարեց զայն: Բնակիչները իր դէմ ելան ու պատերազմեցան, բայց յետոյ ստիպուեցան քաղաքն ապաւինիլ ու իրմէ ապահովութիւն խնդրել՝ երկրէն հեռանալու կամ հարկ վճարելու պայմանով: Անոնցմէ շատեր հեռացան ու գացին Յունաց երկիրը (Փոքր Ասիա): Հայիկ հոն մնաց ամիսներ իրեններուն հետ. յետոյ լսեց թէ Արմինիակոս յոյն կառավարիչը հաւաքած է մեծ բազմութիւն մը Իսլամներու դէմ ու անոր միացած են Ալան, Ասիլապ, ու Սամանտար Խաղաքները: Հայիկ գրեց Օթմանի. անկէ օգնութիւն խնդրեց. Օթման ալ գրեց Մուսուլիայի որ անոր զրկէ Սիւրիոյ ու Միջագետքի ժողովուրդէն անոնք որ ուզեն կրօնքի ու աւարի համար կուտիլ: Մուսուլիա անոր զըրկեց երկու հազար մարդ եւ զանոնք բնա-

կեցուց Կարինի մէջ, անոնց երկիր տուաւ ու հոն զանոնք պահպան նշանակեց:

Երբ Օթման առաւ Հայիկի նամակը, գրեց Սաիտ իպն ալ-Ասի իպն Ումա-յիայի Քուֆայի իր գործակալին՝ հրամայելով անոր որ օգնութիւն զրկէ Հայիկի՝ զօրավարութեամբ Սալման իպն Բալիա ալ-Պահրիի որ է Սալման ձիաւորը որ բարի, առաքինի ու արշաւող մէկն էր: Սալման ձիաւորը ճամբայ ելաւ վեց հազար Քուֆայիով՝ մինչ Յոյները ու անոնց օգնականները հասած ու իջած էին Եփրատի մօտ: Եւ որովհետեւ ուշացան օգնական զօրքերը Հայիկի, Իսլամները գիշերատեն յարձակեցան Յոյներուն վրայ, զանոնք ջախջախեցին ու սպաննեցին անոնց մեծը: Նոյն գիշերը Հայիկի կինը Ում մեծը: Նոյն գիշերը Հայիկի աղջիկը՝ ըսաւ Ապտալա՝ Եղիտ Քալիկի աղջիկը՝ ըսաւ տասխանեց. Յունաց կայսեր վրանին կամ գրախտին մէջ: Եւ երբ վրանը հասաւ (կինը) գտաւ զայն իր քով:

Կը պատմուի թէ երբ Սալման հասաւ, արդէն Իսլամները ազատած էին իրենց թշնամիէն: Քուֆայիները ուղեցին մասնակցիլ աւարին, բայց (Սիւրիացիները) նախկին աւարին, զայն Հայիկ ու Սալման խօսքով զիրար անպատուեցին: Իսլամները իրարու խօսք տուին սպաննել Սալմանը, որուն վրայ ըսած է բանաստեղծը.

Եթէ սպաննէք մեր Սալմանը, մենք կը սպաննենք ձեր Հայիկը,

Եւ եթէ երթաք իպն Օֆֆանի, մենք ալ կ'երթանք:

Գրուեցաւ Օթմանի այդ խնդրին մասին, ան ալ պատասխանեց թէ աւարը քիչ է, կը պատկանի Սիւրիացի բանակին. եւ գրեց Սալմանին ու հրամայեց անոր որ արշաւէ Առանի վրայ (Աղուանք): Ուրիշ-

ներ ալ պատմած են թէ Սալման իպն Բալիա ուղղուեցաւ դէպի Հայաստան Օթմանի խալիֆայութեան շրջանին: Սալման գրեց ու աւարեց եւ մեկնեցաւ Վլիթ իպն Օղալայի քով, որ կը գտնուէր Մուսուլի Հատիթհային մէջ 25ին (645): Այն ատեն անոր եկաւ Օթմանի նամակը, իմացնելով թէ Մուսուլիա իրեն գրած է թէ Յոյները բազմաթիւ զինուորներ բերած են Իսլամներու դէմ ու իրմէ օգնութիւն կը խնդրէ 8000 զինուոր: Օթման զրկեց այս զօրագունը Սալման իպն Բալիա ալ-Պահրիի զօրավարութեամբ ու Մուսուլիա զրկեց Հայիկի նոյն թիւով զինուորներ: Անոնք գրաւեցին բերդերը, ու կողոպտուներ ըրին: Յետոյ կուեցան թէ ո'վ հրամանատար պիտի ըլլայ. այն ատեն Սիւրիացիները ուղեցին սպաննել Սալմանը, որուն վրայ բանաստեղծն ըսաւ. «Եթէ սպաննէք...»: Բայց առաջին աւանդութիւնն աւելի ճշգրիտ է, ինչ որ ինծի պատմած են Կարնեցի ծերունիներ, ու ինծի գրած է անոր մասին ալ-Աթթաֆ իպն Սաֆիան Ապուլ Ասպաղ Կարինի դատաւորը:

Ինծի պատմեց Մուհամմէտ իպն Սատլուկ ալ-Ուսդուտիէն, Ապտըլ-Համիտ իպն Ճաֆարէ ու անոր հօրմէն թէ Հայիկ իպն Մալամա պաշարեց Գուլինի ժողովուրդը ու շարունակեց պաշարումը: Անոր հանդիպեցաւ Մորիան (Մարինոս) Յոյնը: Գիշեր ատեն յարձակեցաւ վրան ու սպաննեց զայն եւ կողոպտեց անոր բանակը, ու յետոյ հասաւ անոր Սալման: Բայց ճշմարիտ է որ անոր հանդիպեցաւ Կարինի մէջ (էջ 197-199):

Թրգմ. արաբերէնէ

Հ. ԱՅՐԱՆՆԱՄ ԱՂԱՄԵԱՆ

(Շարունակելի)

